

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

19 հունիսի 2010 թվականի N 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈՂՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԱՌՅԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 5-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Խորհուրդը ո ռ ո շ ու մ է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի առցանց համակարգի (այսուհետ՝ Առցանց համակարգ) ներդրման առաջարկին:
2. Առաջարկել երիտասարդության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինն՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը, 2010 թվականի հուլիսի 1-ից պետական բյուջեով հասարակական կազմակերպությունների համար նախատեսված դրամաշնորհները տրամադրել առցանց համակարգի միջոցով:
3. Առաջարկել երիտասարդության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինն՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը, միջոցներ ձեռնարկել հասարակական կազմակերպության կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ուսանողական և երիտասարդական կազմակերպված խմբերին կամ կազմակերպություններին (ուսանողական խորհուրդներ, գյուղական երիտասարդական ակումբներ և այլն) երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերից ֆինանսավորում ստանալու համար համապատասխան ընթացակարգերի մշակման ուղղությամբ, և դրանք ներդնել դրամաշնորհների առցանց համակարգում:
4. Հանձնարարել Խորհրդի նախագահի տեղակալ Ա. Քարամյանին և Խորհրդի քարտուղար Ռ. Մարկոսյանին ներկայացնել առաջարկություն պետական բյուջեի միջոցների հաշվին հասարակական կազմակերպությունների ծրագրերի ֆինանսավորման հարցերով Խորհրդի փորձագիտական խմբի անհատական կազմի

վերաբերյալ՝ դիտարկելով նաև Խորհրդի անդամ չհանդիսացող անձանց ներգրավվելու տարբերակը:

5. Առաջարկել երիտասարդության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինն՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը, պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի համար սահմանել տրամադրվող ֆինանսական միջոցների հետևյալ չափաբաժինները.

1. Մեկնարկային ծրագրեր. նախկինում պետական բյուջեից դրամաշնորհ չստացած կազմակերպությունների համար՝ մինչև 500.000 դրամ:

2. Հիմնական ծրագրեր. նախկինում պետական բյուջեից ծրագրեր ստանալու և արդյունավետ կառավարելու փորձ ունեցող կազմակերպությունների համար՝ 500.000 դրամից մինչև 2 միլիոն դրամ: «Ուղևորության» և «Համաֆինանսավորում» տիպի ծրագրերի համար սույն կետում նշված նվազագույն գումարի շեմը կարող է չգործել:

3. Հատուկ ծրագրեր. նախկինում պետական բյուջեից ծրագրեր ստանալու և արդյունավետ կառավարելու, ինչպես նաև մեծածավալ ծրագրեր իրականացնելու փորձ ունեցող կազմակերպությունների համար՝ 2 միլիոն դրամից մինչև 15 միլիոն դրամ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ